Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն՝ Ղուկասյան

Հարգելի ավագանու անդամներ և հյուրեր, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2011թ.-ի առաջին կիսամյակում իմ կողմից ղեկավարած աշխատակազմի և ավագանու իրականացրած աշխատանքների հաշվետվությունը:

Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը:Այդ թվում՝ համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը:Կիսամյակի ընթացքում իմ կողմից հրավիրվել է 5 ավագանու նիստ, որից 2-ը արտահերթ 3-ը հերթական:Նիստերի ընթացքում ապահովվել է համայնքի ավագանիների ներկայությունը /ուղարկվել են ծանուցագրեր և ավագանու օրակարգ /Պահպանելով Հ.Հ. «ՏԻՄ» օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները, ապահովվել է ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների առաքումը մարզպետարան:

Մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացված գրությունների տրվել է սպառիչ պատասխաններ:Ժամանակին ներկայացվել է ամենամսյա, եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ մարզպետարան, վիճ. վարչություն, հարկային տեսչություն, սոցապ ծառայություն:

2011թ. համայնքի բնակիչներին իրենց պահանջով տրամադրվել է 292 տարբեր բնույթի տեղեկանքներ:Կիսամյակի ընթացքում ստացված բազմաբովանդակ դիմումները քննարկվել և ուծում են ստացել օրենքով սահմանված կարգով և համապատասխան ժամկետներում: Օգնության դիմած քաղաքացիների դիմումները բացառապես բավարարվել են:Մահացածների ընտանիքներին տրվել է յուրաքանչյուր ընտանիքին 60,0 /վաթսուն հազար/ դրամի չափով օգնություն: Որպես համայնքի ղեկավար, ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ: Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հարկերի և տուրքերի հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

Հողի հարկը կիսամյակի կտրվածքով 2.250.0 հզ. դիմաց հավաքագրվել է՝ 1.480.4հզ. դրամ՝ 65.8%:

Գույքահարկ շենք շինությունների համար՝ 62.5 հզ. դիմաց կատարվել է հավաքագրում 12.4 հզ. դրամ 19.8%:

Տեղական տուրքերի դիմաց 34.8 հզ. դրամի դիմաց հավաքագրվել է 9.0 հզ. դրամ, 25.9%:

Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 300.0 հզ. դիմաց հավաքագրվել է 240.1 հզ. դրամ, 80 %:

Վարձակալական հողի հարկ 150.0 հզ. դրամի դիմաց մուծվել է 3.4 հզ. դրամ, 2.3%:

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

ա)Կազմավորված խնամակալների և հոգաբարձության խորհուրդը կատարել է մեկ այլ համայնքում բնակվող Հաջոյանների ընտանիքին, որտեղ մեծանում են երկու անչափահաս աղջիկներ, հանձնաժողովի եզրակացության և համայնքի ղեկավարի որոշման հիման վրա ընտանիքի անչափահաս երեխաները հանձնվել են տատիկի ժամանակավոր խնամքին:Հաշվի առնելով այն փաստը, որ երեխաների ծնողները գտնվում են արտերկրում:

2.Ֆինասների բնագավառում ավագանու հաստատմանն է ներկայացվել բյուջեի երկու փոփոխություն, որը փորձաքննության է ուղարկվել Արդարադատության նախարարություն և մարզպետարան օրենքով սահմանված կարգով:

2.1Առաջի կիսամյակի ընթացքում ընդունելության եկած 12 բնակիչների տրվել է սոց օգնություն 740.0 /յոթ հարյուր քառասուն հազար/ դրամ:
3.Հասարակական կարգի պահպանության բնագավառում մեր կողմից քննարկվել են ոստիկանության կատարած տեղեկատվության հիման վրա՝ վարչական իրավախախտումները, տրվել է չորս նախազգուշացում:
4.Պաշտպանության բնագավառում աջակցել ենք գարնանային զորակոչին, ուսումնավարժական հավաքներին և զորահավաքներին:
Զին. կոմիսարիատից եկած գրություններին տրվել է սպառիչ պատասխան, ներկայացվել են համապատասխան տեղեկանքներ, համայնքի զորակոչային տարիքի բնակիչների վերաբերյալ:
5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝ կատարվել են հետևյալ աշխատանքները.
Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական մեկ անգամ:
Գյուղապետարանի կողմից տնային տնտեսությունների հասցեների ճշգրտման գործընթացը լրիվ ավարտված է:
Համայնքում գործում է գերեզմանատուն:
Սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների հետ:
Կազմակերպվել է բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ մասնավորապես ծառատունկ:
Կազմակերպվել է հանգստի միակ գոտի հանդիսացող հուշարձանի տարածքի խնամքը և պահպանությունը:
6.Հողօգտագործման բնագավառում՝
Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:
1/Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, կազմվել և համապատասխան մարմինների հետ համաձայնեցվել է հողային հաշվեկշիռը, որը ժամանակին ներկայացվել է մարզպետարան:
2/Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:
7.Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում է գյուղապետարանի աջակցությանը:Գյուղապետարանի ներկայացուցիչը, որը ընդգրկվել միջնակարգ դպրոց ՊՈԱԿ կոլեգյալ մարմնի խորհրդի կազմում /Ա. Խաչատրյան/ պահպանում է կապը դպրոց գյուղապետարան օղակում:
Համայնքում Հայրենական պատերազմի Հաղթանակի 66-րդ տարեդարձի և Հանրապետության տոնին նվիրված միջոցառման ընթացքում համայնքի հյուրն էր մեր համագյուղացի /Մոսկվայաբնակ/ Ռ. Գ. Կարապետյանը: Միջոցառումն անցավ շատ հետաքրքիր և բովանդակալից:
8.Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջապահության բնագավառում՝
1/աջակցել ենք համայնքի սանիտարական վիճակի բարելավմանը, մասնավորապես միջհամայնքային ճանապարհներին հարող տարածքներում կատարվել է չորացած խոտերի մաքրում:
2/Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նվիրված միջոցառումների շրջանակներում իրականացնելով համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները՝ համայնքում կազմակերպել ենք ֆուտբոլի երկու խմբակ, շախմատի մեկ խմբակ:Այդ նպատակով ունենք սպորտային կազմակերպիչ:
9.Գյուղատնտեսության բնագավառում աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
Մեր կողմից աջակցվել է Արմավիրի մարզի կարկտահարված համայնքներին, որպես օգնություն կատարվել է փոխանցում 50,0 հզ. դրամի չափով:Բնակչությանը բաժանվել է «ԱԶՕՏԵՕՎԻՏ» բիո-պարարտանյութ:

Սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները գյուղում, մասնավորապես ցորենի, կարտոֆիլի, կաղամբի, լոլիկի, վարունգի, պղպեղի բերքահավաքը:Այս տարվա բերքը բավականին առատ է:Իմ միջամտությամբ գյուղ է բերվել մեկ կոմբայն, որը օգնում է գյուղացիներին հավաքել ցորենի և գարու բերքը:

Համայնքում այս կիսամյակում իրականացվել է մի շարք ներդրումային ծրագրեր, համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

1/Մասնակի վերանորոգման է ենթարկվել մշակույթի տան երկու սենյակները և կահավորվել է: Կատարված ներդրումային ծրագրերի գինը կազմում է 330,0հզ. դրամ:

Այս ամենի կողքին համայնքում առկա են թերություններ.

Բազմիցս դիմել ենք էլեկտրոցանցեր ՓԲԸ տնօրեն՝ պարոն Ղազինյանին, մետաղյա էլեկտրասյունները փոխելու հարցով:Քանի որ գյուղացիներից ունենք դիմում- բողոքներ, որ խոնավ եղանակին էլ. սյուները հոսանքահարում են:

Ես, որպես համայնքի ղեկավար մտահոգ եմ այս խնդրի շուրջ և ցանկանում եմ ամեն ձևով հարցին լուծում տալ, որը առայժմ չի ստացվում:Համայնքի ցավոտ խնդիրներից ուզում եմ նշել այն փաստը, որ համայնքում չկա խաղահրապարակ:Մշակույթի տունը, որը կարող է ծառայել միջոցառումներ, ժողովներ կազմակերպելու համար՝ գտնվում է վթարված վիճակում, որը կապիտալ վերանորոգման կարիք ունի: Համայնքի ճանապարհները բարոյապես իրենց մաշել են, էլ չեմ խոսում համայնք մտնող ճանապարհի մասին, որը նույնպես վերանորոգման կարիք ունի:Քանի որ, այն խոչընդոտում է գյուղ մտնող մեքենաների անվտանգությունը:Ասելիքս ավարտեմ նրանով, որ այս հարցում համայնքի բնակչությանը աջակցելու համար՝ որոշել ենք ներհամայնքային ճանապարհները մասնակի վերանորոգել այն հույսով, որ կապահովենք բնակչության տեղաշարժը:

Կան աշխատանքներ, որոնք իմ նաընտրական ծրագրով նախատեսված է և դեռ պետք է լուծում ստանան մինչև տարեվերջ:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.07.2011թ.
գ. Մրգաստան
ժամը.15.00